

09

ՀՈՒՆԻՍԻ
2022

Luys



Linyu®



ԱՐԴՅՈ՛Ք ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԻ ԱՐԿԱԾԱԽՆԴԻՐ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏ. ՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ՝ ԸՍՏ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀԱՅՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ

ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԻ
ԱՐԿԱԾԱԽՆԴԻՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏ. ՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ՝ ԸՍՏ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅՏՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԱՅԺՄ ԱՎԵԼԻ ՄՏԱՀՈԳ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ.....	2
2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԵՐԺՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ «ՆՇԱԶՈՂԻ ԻՋԵՑՈՒՄԸ».....	5
3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ներկայիս իշխանությունները իրենց վտանգավոր և խիստ հակասական արտաքին քաղաքական նախաձեռնություններն ու առաջնահերթությունները հաճախ հիմնավորում են ժողովրդից ստացած մանդատով՝ որպես փաստարկ ներկայացնելով 2021թ. հունիսին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Բազմիցս նշվել է, որ չնայած այդ արդյունքներին, իրականում ոչ ոք գործող կառավարությանը մանդատ չի տվել Արցախի կարգավիճակի «նշաձողն իջեցնելու», ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժած ադրբեջանցիներին դուրս բերելու հարցում զիջումների գնալու, Ադրբեջանին «միջանցք» տրամադրելու, առավել ևս ՀՀ տարածքից Բաքվին նոր զիջումներ անելու (խոսքը այսպես կոչված «անկլավների» մասին է, քանի որ վարչապետն ինքն է մի քանի անգամ նշել, թե իբր ներկայումս Հայաստանի վերահսկողության տակ կան ադրբեջանական տարածքներ¹): Իշխող կուսակցության նախընտրական ծրագրում արված էին ճիշտ հակառակ պնդումները, հետևաբար վերջինիս մանդատը լեգիտիմ է այնքանով, որքանով չի շեղվում այդ ծրագրի տրամաբանությունից, մինչդեռ ներկայիս արտաքին քաղաքական օրակարգը որևէ աղերս չունի նախընտրական խոստումների հետ:

Բազմիցս նշվել է նաև, որ իրականում այս կամ այն համազգային նշանակության հարցի շուրջ (ԼՂ հարցի վերջնական կարգավորում, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորում, արտաքին քաղաքական վեկտորի փոփոխություն և այլն) էական զիջումների գնալու միակ լեգիտիմ եղանակը կարող է լինել բացառապես ժողովրդի կողմից ուղիղ մանդատի ստացումը, օրինակ՝ հանրաքվեի միջոցով: Ակնհայտ է, որ գործող կառավարությունը չի պատրաստվում նշված հարցերից և ոչ մեկի շուրջ հանրաքվե նախաձեռնել, ուստի ինչպե՞ս է հնարավոր շոշափել հանրային կարծիքը այս կամ այն կարևոր հարցի շուրջ: Որպես միջանկյալ (բայց, իհարկե, ոչ լիարժեք լեգիտիմություն ունեցող) լուծում կարելի է դիտարկել քիչ թե շատ վստահելի միջազգային կազմակերպությունների կողմից հանրային կարծիքի հարցումների տվյալները:

¹ Վարչապետն ամփոփել է ապրիլի 6-ին Բյուսելում կայացած եռակողմ հանդիպման արդյունքները, 07.04.2022, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/04/07/Cabinet-meeting-Speech/> (այցելվել է 08.06.2022թ.):


Այսպես, 2021թ. դեկտեմբերից 2022թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում Հայաստանում նմանատիպ հարցում² է անցկացրել «Եվրագի» հիմնադրամի և «Կարնեգի» կենտրոնի կողմից ֆինանսավորվող «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն» (ՀՌԿԿ) հիմնադրամը³: Իհարկե, ինչպես հանրային կարծիքի ցանկացած հարցում, այս դեպքում էլ ՀՌԿԿ հարցումները հիմնված են վիճահարույց մեթոդաբանության վրա և արժանացել են որոշ մասնագիտական քննադատությունների՝ օրինակ սոցիոլոգիական մեթոդաբանության խնդիրների տեսանկյունից, սակայն հաշվի առնելով հանրային կարծիքի գնահատման ավելի արժանահավատ եղանակներից՝ օրինակ հանրաքվեի արդյունքներից օգտվելու անհնարինությունը, փորձենք վերլուծել մեզ հասանելի տվյալները: Հարցումները հետաքրքիր պատկեր են ստեղծում Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների և հիմնական գործընթացների, մասնավորապես՝ Արցախի հիմնախնդրի, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների և մի շարք այլ հարցերում հայ հասարակության մոտեցումների և դիրքորոշումների վերաբերյալ: Սույն վերլուծության շրջանակներում փորձել ենք անդրադառնալ դրանցից ամենակարևորներին:

1. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԱՅԺՄ ԱՎԵԼԻ ՄՏԱՀՈԳ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի անցկացրած հարցման հետաքրքիր ցուցիչներից մեկն այն է, որ ՀՀ բնակչության բավական մեծ հատվածը՝ ավելի քան 40%-ը հետաքրքրված է միջազգային քաղաքականությամբ, հետևաբար իշխանության գործունեության գնահատականների և վերջինիս լեգիտիմության հարցում արտաքին քաղաքական գործունեությունը Հայաստանում շատ կարևոր նշանակություն ունի:


² Կովկասյան բարոմետր 2021-2022, CRRC Armenia, Երևան, հունիս, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B8%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80_%D5%BA%D6%80%D5%A5%D5%A6%D5%A5%D5%B6%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1_2021_PDF_Final-Final.pdf (այցելվել է 08.06.2022թ.):

³ CRRC-Armenia Foundation, About us, Who we are? <https://www.crrc.am/about-us/> (այցելվել է 08.06.2022թ.):




Միջազգային քաղաքականությամբ Հայաստանի քաղաքացիների բավական մեծ հետաքրքրությունը պայմանավորված է առաջին հերթին Արցախյան հիմնախնդրի և Հայաստանի շուրջ բավական բարդ արտաքին անվտանգային միջավայրի առկայությամբ։ Այս առումով ուշագրավ է, որ հարցվածների 73%-ը 2018-2021թթ. Հայաստանի ամենամեծ ծախսողումները կապում է Արցախի հարցի հետ, մասնավորապես՝ 59%-ը գործող վարչապետի ամենամեծ ծախսողումն է համարում Արցախյան երկրորդ պատերազմը տանուլ տալը, իսկ ևս 14%-ը պատերազմը կանխելու հարցում վերջինիս դիվանագիտական ծախսողումը։ Այսինքն՝ որքան էլ գործող իշխանությունը փորձի 44-օրյա պատերազմի արհավիրքի հարցում իր վրայից գցել պատասխանատվությունը, միևնույն է, հասարակության մեծ մասը այն համարում է գործող իշխանության գլխավոր ծախսողումը։ Ուշագրավ է, որ նախորդ նախագահների գործունեությանը տրված գնահատականներում Արցախի շուրջ բանակցային գործընթացի հարցում ծախսողումների մասին նշել են հարցվածների ընդամենը 11-13%-ը, իսկ 2016թ. Ապրիլյան պատերազմը որպես նախորդ իշխանության ծախսողում է գնահատել հարցվածների 21%-ը։

Ձեր կարծիքով, ո՞րն է Հայաստանի ամենամեծ ծախողումը 2018-2021 թթ.՝ Նիկոլ Փաշինյանի կառավարման տարիներին: n=1494




Հետաքրքիր է նաև, որ գործող իշխանության պաշտոնավարման ժամանակահատվածը գնահատվել է որպես Հայաստանի ամենամեծ ծախողումը, ինչը միանշանակ հիմնականում կապված է արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերում գործող իշխանությունների ծախողումների հետ:



Հենց այդ ոլորտում տեղի ունեցած և շարունակվող փլուզումների արդյունքում է, որ ի տարբերություն նախորդ տարիների, էականորեն փոխվել է ՀՀ քաղաքացիների մոտեցումը երկրի առջև ծառացած 5 ամենակարևոր խնդիրների հարցում: Եթե 2012

և 2019 թվականներին բնակչության մեծամասնությունը ամենակարևոր խնդիրները համարում էր գործազրկությունն ու աղքատությունը՝ համապատասխանաբար 61%-ը և 44%-ը, ապա 2021-ին հարցվածների միայն 4%-ն է ամենակարևոր խնդիրը համարել աղքատությունը, իսկ շուրջ 71%-ը ամենակարևոր խնդիրները դիտարկել է անվտանգային տիրույթում:




Այսինքն՝ 44-օրյա պատերազմից հետո որքան էլ իշխանությունը փորձում է տպավորություն ստեղծել, թե Հայաստանի քաղաքացիներն ապրում են առօրյա խնդիրներով՝ հանրային-քաղաքական օրակարգը լցնելով երկրորդական, կենցաղային հարցերով, այնուամենայնիվ ՀՀ քաղաքացիների մեծ մասը շատ լավ հասկանում է Հայաստանում և նրա շուրջը ստեղծված արտաքին քաղաքական և անվտանգային լուրջ մարտահրավերները: Դրանցից ամենակարևորը թերևս վերաբերում է Արցախի հետագա ճակատագրին և այդ հարցում Հայաստանի քաղաքացիների դիրքորոշմանը:

2. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԵՐԺՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ «ՆՇԱՁՈՂԻ ԻՋԵՑՈՒՄԸ»


Հետազոտության մի առանձին հատված նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմին, որտեղ նույնպես առկա են մի շարք ուշագրավ տվյալներ, որոնք հակասության մեջ են մտնում ՀՀ գործող իշխանությունների ներկայիս արտաքին

քաղաքական օրակարգի հետ: Այսպես, թերևս ամենաուշագրավ պատկերը արտացոլված է Արցախի կարգավիճակի շուրջ հարցադրման արդյունքներում:



Մասնավորապես, հարցվածների 90,9%-ը հնարավոր է համարում, որ հավանություն կտա Արցախի այնպիսի կարգավիճակին, որը կապահովի, որ վերջինս պաշտոնապես լինի ՀՀ մաս, 79,9%-ը հնարավոր է համարում իր հավանությունը Արցախի անկախությանը, իսկ 52,6%-ը չի բացառում, որ հավանություն կտա Արցախի՝ ՌԴ կազմում կարգավիճակին: Միաժամանակ, **հարցվածների 97,9%-ը բացառում է Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում, 98,2%-ը բացառում է Արցախի անցումն Ադրբեջանին՝ առանց կարգավիճակի:** Փաստորեն ՀՀ քաղաքացիների ընդամենը շուրջ 2%-ն են կողմ Արցախի կարգավիճակի «նշաձողի իջեցմանը»: Ըստ էության, այսօր ՀՀ կառավարությունը «Ժողովրդի անունից» առաջ է տանում մի գործընթաց, որը ՀՀ քաղաքացիների շրջանում վայելում է լավագույն դեպքում 2% հանրային վստահություն:


Հայտնի է, որ ՀՀ գործող իշխանությունները, ինչպես նաև պաշտոնական Բաքուն Հայաստանի ընդդիմությանը հաճախ որակում են որպես «ռևանշիստներ»: Իրականում հարցումները ցույց են տալիս, որ այդ տրամաբանության շրջանակներում ՀՀ քաղաքացիների առնվազն 74%-ն են «ռևանշիստներ». հարցվածների 32%-ը Հայաստանի հիմնական նպատակը՝ կապված Լեռնային Ղարաբաղի տարածքների հետ, համարում է բոլոր այն տարածքների վերականգնումը, որոնք կազմում էին նախկին ԼՂԻՄ-ը, իսկ 42%-ը՝ 44-օրյա պատերազմից առաջ ԼՂ տիրապետության տակ գտնվող տարածքների վերականգնումը: Հարցվածների միայն 26%-ն է համամիտ պահպանել ներկայիս իրավիճակը (ստատուս քվո):



Այսինքն՝ ՀՀ քաղաքացիները ոչ միայն համաձայն չեն Արցախի կարգավիճակի «նշաձողի իջեցման» հարցում զիջումներին, այլ կողմնակից են Արցախի օկուպացված տարածքների դեօկուպացիային:

Գործող իշխանությունների օրակարգի և ՀՀ քաղաքացիների հանրային կարծիքի միջև էական խզում կա նաև տրանսպորտային կապերի ապաշրջափակման հարցում: Այսպես, հարցվածների 66%-ը համաձայն չէ տարածաշրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը, և միայն 6%-ն է լիովին համաձայն այդ հարցում, ևս 12%-ը որոշ չափով է համաձայն: Այսինքն՝ ՀՀ կառավարության՝ Հայաստանն այսպես կոչված «կոմունիկացիոն խաչմերուկի», իսկ իրականում «գեոպոլիտիկ առճակատման խաչմերուկի» վերածելու օրակարգը


վայելում է ՀՀ քաղաքացիների առավելագույնը 18%-ի համակրանքը, մինչդեռ իշխանությունները մշտապես խոսում են ժողովրդի վստահության և իրենց տրված մանդատի մասին:



Ավելին, ըստ հարցումների՝ **քաղաքացիների 81%-ը լիովին կամ որոշ չափով համաձայն է, որ Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև տրանսպորտային հաղորդակցության բացումը սպառնալիք է ՀՀ ազգային անվտանգության համար**, իսկ 55%-ը ընդհանրապես կամ որոշ չափով համաձայն չէ, որ այն տնտեսական զարգացման հիմքեր է ստեղծում: Հարցվածների միայն 12%-ն է լիովին համաձայն տնտեսական հնարավորությունների հարցում, և միայն 7%-ը այն միանշանակ չի համարում անվտանգային սպառնալիք: Փաստորեն, այս հարցում էլ գործող կառավարությունը որևէ մանդատ չունի, քանի որ ակտիվորեն առաջ է տանում և խրախուսում մի գործընթաց, որը ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը համարում է ազգային անվտանգության սպառնալիք և դրանում տնտեսական զարգացման հիմքեր չի տեսնում:



Ասեք խնդրեմ, որքանով էք համաձայն հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի հետ:

Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի միջեւ տրանսպորտային հաղորդակցությունը...




Ուշագրավ է նաև 44-օրյա պատերազմի անխուսափելիության վերաբերյալ հարցադրումը: Այստեղ հետաքրքիր է, որ ՀՌԿԿ-ի կայքում անգլերեն տարբերակի և հրապարակված հայերեն թարգմանության մեջ կա բովանդակային լուրջ տարբերություն, ինչը, հավանաբար, սխալ թարգմանության կամ որոշակի անփութության հետևանք է: Մասնավորապես, անգլերեն տարբերակում հարցադրումը հետևյալն է. «Արդյո՞ք կարծում եք, որ Լեռնային Ղարաբաղում/Արցախում 44-օրյա պատերազմից հնարավոր էր (was avoidable) խուսափել»⁴, և հարցվածների 60%-ը նշել է՝ այո, այսինքն՝ հնարավոր է համարել պատերազմի կանխումը: Հայերեն տարբերակում նշվում է, ճիշտ հակառակը՝ հարցվածների 66%-ը գտնում է, որ պատերազմն անխուսափելի էր:

NKWARAV: Do you think that the 44-day War in Nagorno-Karabakh/Artsakh was avoidable? (%)
This question was asked for those respondents who have heard about Nagorno-karabakh war



⁴ <https://caucasusbarometer.org/en/cb2021am/NKWARAV/> (այցելվել է 08.06.2022թ.):


Առհասարակ, համաձայն ՀՌԿԿ-ի հարցումների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների վերաբերմունքը շատ միանշանակ է: 2018-ի իշխանափոխությունից հետո Հայաստանում տեղ գտած կարևոր արտաքին քաղաքական իրադարձություններից մեկն այն ժամանակ ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոլթոնի այցն էր Երևան, երբ վերջինս Հայաստանին առաջարկեց «դուրս գալ պատմական կաղապարներից»: Շատերի կողմից այդ առաջարկն անվանվեց «Բոլթոնի պլան» և համարվեց Հայաստանի իշխանությունների առաջիկա զիջումների նախերգանքը: ՀՀ իշխանությունների հետպատերազմյան զիջողական, անցյալը աղավաղելուն և նսեմացնելուն միտված վարքագիծը լիովին տեղավորվում է պայմանական «Բոլթոնի պլանի» շրջանակներում, սակայն վերոհիշյալ հարցումները նույնիսկ այս հարցում ապացուցում են, որ գործող կառավարությունն իր այս քաղաքականությունը վարում է ի հեճուկս հանրային աջակցության և ժողովրդի մանդատի: Հարցվածների 89%-ը մերժում է «Բոլթոնի պլանը»՝ համաձայնելով, որ անհնար է մոռանալ այն, ինչ կատարվել է նախկինում ազգերի միջև:



Ըստ էության, ՀՌԿԿ-ի հարցումների՝ Արցախի շուրջ տեղի ունեցող գործընթացներին վերաբերող հատվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է մեծ խզում այս ուղղությամբ կառավարության կողմից տարվող քաղաքականության և Հայաստանի քաղաքացիների պատկերացումների ու ակնկալիքների միջև: Հետևաբար, ազգային կենսական հարցերում էական զիջումները ժողովրդից ստացած մանդատով արդարացնելու քաղաքականությունը լեգիտիմություն չունի:


3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Վերջին տարիներին ՀՀ ներքաղաքական գործընթացներում ամենաշատ շահարկվող թեմաներից մեկը ՀՀ քաղաքացիների և հիմնական քաղաքական ուժերի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցն է: Գործող իշխանությունը, նախքան 2018-ի իշխանափոխությունը, հայտնի էր հիմնականում արևմտամետ դիրքորոշումներով, և նախորդ իշխանություններին պարբերաբար քննադատում էր սխալ արտաքին քաղաքականության մեջ: Թերևս ամենաչարչրկված քննադատությունը ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության վերաբերյալ որոշումն էր, մինչդեռ իշխանափոխությունից կարճ ժամանակ հետո պարզ դարձավ, որ այդ ուղղությամբ նոր կառավարությունը որևէ էական փոփոխություն չի պատրաստվում նախաձեռնել: Գիտակցելով նախորդ իշխանությունների ընտրած արտաքին քաղաքական վեկտորի այլընտրանքի բացակայությունը, գործող կառավարությունը ստիպված է շարունակել նույն գիծը, սակայն փոխարենը, վերջինս ձգտում է միաժամանակ պատրանք ստեղծել, թե երկրում առկա է ուժեղ արևմտամետ ընդդիմություն և իր անհավասարակշիռ արտաքին քաղաքական վարքագիծը երբեմն փորձում է հիմնավորել այդ շրջանակներից եկող «հանրային պահանջով»: Հետաքրքիր է, որ նույնիսկ արևմտյան հիմնադրամի կողմից կազմակերպած այս հարցումները ցույց են տալիս, որ ՀՀ քաղաքացիների շուրջ 40%-ը հավանություն է տալիս ՀՀ անդամակցությանը ԵԱՏՄ-ին, ևս 26%-ը այդ հարցում չեզոք դիրքորոշում ունի: Սա նշանակում է, որ նույնիսկ 4 տարի տեղ գտած ակտիվ պետական քարոզչությունից հետո ՀՀ քաղաքացիները հիմնականում համամիտ են նախորդ իշխանությունների կողմից ընտրված արտաքին քաղաքական ուղղության հետ:




Միաժամանակ, հարցումներն ի ցույց են դնում շատ մտահոգիչ պատկեր՝ կապված ՀՀ քաղաքացիների կողմից անկախ պետականության նկատմամբ վստահության ցածր մակարդակի հետ: Խարխված անվտանգային, սոցիալ-տնտեսական միջավայրը, անորոշությունը միջազգային հարաբերություններում հանգեցրել են նրան, որ ՀՀ քաղաքացիների մի մեծ հատված բացասական է գնահատում ԽՍՀՄ փլուզումն ու ՀՀ անկախության վերականգնումը: Այսպես, հարցվածների 67%-ը ԽՍՀՄ փլուզումը Հայաստանի համար բացասական է գնահատում, իսկ 56%-ը նշել է, որ ինքը ավելի վատ է ապրում, քան ԽՍՀՄ-ում: Նման գնահատականների խորքային պատճառները, անշուշտ, կապված են նաև 44-օրյա պատերազմում պարտության և Հայաստանի ու Արցախի հետագա ճակատագրի վերաբերյալ անորոշության հետ:

Ըստ Ձեզ՝ Խորհրդային Միության
փլուզումը Հայաստանի համար
դրական էր, թե՞ բացասական: n=1647




Խորհրդային Միության ժամանակաշրջանի
հետ համեմատած դուք ավելի լավ եք
ապրում, ավելի վատ, թե նույն կերպ: n=1450



Պատահական չէ, որ այս օբյեկտիվ իրողությունից ելնելով, հարցվածների կեսը չեն բացառել ՀՀ ինքնիշխանության մակարդակի նվազեցումը՝ Հայաստանի անդամակցությունը Բելառուսի և Ռուսաստանի հետ միութնական պետությանը: Ավելին, հարցվածների 34%-ը կողմ կամ ավելի շուտ կողմ է արտահայտվել այդ հեռանկարին, և միայն 28%-ն է միանշանակ դեմ ՀՀ ինքնիշխանության սահմանափակմանը: Պատերազմից առաջ և դրանից հետո վարվող անհեռատես ու պարտվողական քաղաքականության արդյունքում Հայաստանն այլևս ի վիճակի չէ ինքնուրույն ապահովել սեփական անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը, ուստի նման մոտեցումը լավագույնս արտացոլում է պետության պաշտպանական-անվտանգային համակարգի փլուզման իրական մակարդակը:


Որքանով եք կողմ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի հետ միասին միությանական պետություն կազմելուն: n=1437




Այդուհանդերձ, հարցումները նաև ցույց են տալիս, որ 44-օրյա պատերազմից հետո զգալիորեն փոխվել է ՀՀ քաղաքացիները կարծիքը Հայաստանի ամենաբարեկամական երկրների հարցում: Օրինակ, եթե 2017-ին ՀՀ բնակչության 63%-ն էր Ռուսաստանին համարում ամենաբարեկամական երկիրը, ապա 2021-ին միայն 35%-ն է այդ տեսակետին, միաժամանակ եթե 2017-ին հարցվածների միայն 5%-ն էր Ֆրանսիային համարում ամենաբարեկամական երկիրը, ապա 2021-ին այդ ցուցանիշը կազմում է 36%՝ ավելի բարձր, քան ՌԴ պարագայում: Ստացվում է տարօրինակ իրավիճակ, երբ չնայած 44-օրյա պատերազմից հետո մեծացել է ՌԴ անվտանգային դերակատարությունը Արցախի և Հայաստանի համար, սակայն վերջինիս նկատմամբ հանրային դրական ընկալումը գրեթե կրկնակի նվազել է: Այսինքն, որքան մեծացել է ՌԴ պատասխանատվության աստիճանը, այնքան նվազել է վերջինիս հեղինակությունը:

Սա պատահական չէ, մի կողմից այն կապված է 44-օրյա պատերազմի ժամանակ չեզոք միջնորդի դեր ստանձնելու ՌԴ փորձերի հետ, մյուս կողմից 44-օրյա պատերազմից հետո ՀՀ իշխանության որդեգրած քաղաքականության ուղղակի հետևանք է, երբ Հայաստանում և Արցախում սահմանների և անվտանգության հետ կապված բոլոր խնդիրներում փորձ է արվում պատասխանատվությունը դնել ՌԴ կամ ՀԱՊԿ վրա: Անշուշտ, ՌԴ նկատմամբ հանրային ընկալումների վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև Հայաստանում տարվող հակառուսական

քարոզչությունը, որը երբեմն անթաքույց խրախուսվում է իշխանամետ գործիչների և մամուլի կողմից: Այս դինամիկան վստահաբար աննկատ չի մնում ռազմավարական դաշնակից Ռուսաստանում և որոշակի ազդեցություն է ունենում Հայաստանի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի վրա, ուստի նաև այս համատեքստում պետք է դիտարկել տարածաշրջանի այլ դերակատարների հետ հարաբերությունները հավասարակշռելու՝ Մոսկվայի փորձերը, օրինակ՝ Ադրբեջանի հետ հարաբերությունների բարձրացումը դաշնակցային մակարդակի:



Հետաքրքիր պատկեր է ի ցույց դնում նաև Հայաստանի ամենաթշնամական երկրների մասին հասարակական կարծիքի ուսումնասիրությունը: Այսպես, 44-օրյա պատերազմի ժամանակ Թուրքիայի ակտիվ ներգրավվածությունը հանգեցրել է նրան, որ Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ հանրային ընկալումը «համահարթեցվել է», այսինքն՝ ՀՀ քաղաքացիները այդ երկու երկրներին համարում են ՀՀ հանդեպ ամենից շատ և նույնքան թշնամաբար տրամադրված երկրներ:




Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ անհիմն են Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցում ՀՀ գործող իշխանությունների համեմատությունները «ֆուտբոլային դիվանագիտության» ժամանակաշրջանի հետ, ինչպես նաև պնդումները, թե ժողովրդից ստացել են Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու մանդատ՝ առավել ևս ազգային օրակարգի կարևորագույն հարցերում զիջումների գնով:

Հայտնի է, որ 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո գործող իշխանությունը «ժողովրդավարությունը» հռչակեց որպես Հայաստանի «միջազգային բրենդ», իսկ նախկին արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը ժողովրդավարությունը համարում էր «անվտանգության հարց» և այն դնում ՀՀ արտաքին քաղաքականության հիմքերում⁵: Ուշագրավ է, որ ՀՌԿԿ-ի հարցումները նաև Հայաստանի ժողովրդավար լինելու հարցում քաղաքացիների ընկալումների մասին են շատ հետաքրքիր պատկեր ապահովել: Մասնավորապես, հարցվածների միայն 10%-ն է համամիտ «ժողովրդավարության բաստիոնի» գնահատականի հետ՝ նշելով, որ Հայաստանը լիովին ժողովրդավարական է: Մինչդեռ 22%-ը համարում է,

⁵ Մենք պետք է բարձրացնենք քաղաքական կյանքում կանանց մասնակցության մակարդակը. Զոհրաբ Մնացականյան, 23 նոյեմբերի 2018, <https://www.armenpress.am/arm/news/955593/arm/> (այցելվել է 08.06.2022թ.):

որ Հայաստանը բնավ ժողովրդավարական չէ, իսկ ևս 46%-ը Հայաստանի ժողովրդավարության մեջ մեծ խնդիրներ է տեսնում: Այսինքն՝ նույնիսկ այս հարցում իշխանությունների հայտարարություններն ու հանրային ընկալումները էականորեն տարբերվում են միմյանցից:



ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն» (ՀՌԿԿ) հիմնադրամի հարցումների արտաքին քաղաքական-անվտանգային բաղադրիչի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս այս ուղղությամբ ՀՀ իշխանությունների կողմից վարվող քաղաքականությունը հիմնականում հակասում է Հայաստանի քաղաքացիների մեծ մասի մոտեցումներին և պատկերացումներին: Այսինքն, եթե նույնիսկ 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում գործող իշխանությունը կարողացել է վերարտադրվել, դա դեռ չի նշանակում, որ Հայաստանի քաղաքացիները վերջինիս պատվիրակել են կարևոր ազգային և


անվտանգային հարցերում լուրջ զիջումների գնալու և նոր ցնցումներ նախաձեռնելու մանդատ: Եթե ամփոփ ներկայացնենք հետազոտության արդյունքները, ապա.

- Հարցվածների 73%-ը 2018-2021թթ. Հայաստանի ամենամեծ ձախողումները կապում է Արցախի հարցի հետ, մինչդեռ նախորդ իշխանությունների հիմնական ձախողումների մասին հանրային ընկալումները կապված էին սոցիալ-տնտեսական և այլ ոլորտների հետ:
- Հայաստանի անվտանգային համակարգի փլուզումը հանգեցրել է նրան, որ գործող իշխանության պաշտոնավարման ժամանակահատվածը՝ 2018-2021թթ. գնահատվել է որպես Հայաստանի նորանկախ պատմության ամենամեծ ձախողումը:
- Եթե նախքան 44-օրյա պատերազմը բնակչության մեծամասնությունը ամենակարևոր խնդիրները համարում էր գործազրկությունն ու աղքատությունը, ապա այժմ հարցվածների շուրջ 71%-ը ամենակարևոր խնդիրները դիտարկել է անվտանգային տիրույթում:
- Հարցվածների 97,9%-ը բացառում է Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեջանի կազմում, 98,2%-ը բացառում է Արցախի անցումն Ադրբեջանին՝ առանց կարգավիճակի:
- ՀՀ քաղաքացիների ընդամենը շուրջ 2%-ն են կողմ Արցախի կարգավիճակի «նշաձողի իջեցմանը»:
- Գործող իշխանության տրամաբանության շրջանակներում ՀՀ քաղաքացիների առնվազն 74%-ը «ռևանշիստներ» են. հարցվածների 32%-ը Հայաստանի նպատակն է համարում նախկին ԼՂԻՄ տարածքների (Շուշի, Հադրութ և այլն) վերադարձը, իսկ ևս 42%-ը՝ 44-օրյա պատերազմից առաջ ԼՂ տիրապետության տակ գտնվող տարածքների վերականգնումը:
- Հարցվածների 66%-ը համաձայն չէ տարածաշրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը:
- Քաղաքացիների 81%-ը Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև տրանսպորտային հաղորդակցության բացումը համարում է սպառնալիք ՀՀ ազգային անվտանգության համար, իսկ 55%-ը դրանում տնտեսական զարգացման հիմքեր չի տեսնում:
- Հարցվածների 89%-ը մերժում է իշխանությունների կողմից փաստացի առաջ մղվող «պատմական կաղապարներից ազատվելու» «Բոլթոնի պլանը»՝ համաձայնելով, որ «անհնար է մոռանալ այն, ինչ կատարվել է նախկինում ազգերի միջև»:

- ՀՀ քաղաքացիները հավանություն են տալիս նախորդ իշխանությունների որդեգրած արտաքին քաղաքական վեկտորին. հարցվածների շուրջ 40%-ը հավանություն է տալիս ՀՀ անդամակցությանը ԵԱՏՄ-ին, ևս 26%-ը այդ հարցում չեզոք դիրքորոշում ունի:
- Խարխված անվտանգային, սոցիալ-տնտեսական միջավայրը, անորոշությունը միջազգային հարաբերություններում հանգեցրել են նրան, որ ՀՀ քաղաքացիների մի մեծ հատված՝ 67%-ը բացասական է գնահատում ԽՍՀՄ փլուզումն ու ՀՀ անկախության վերականգնումը:
- Գործող կառավարությունը երկիրը հասցրել է մի կետի, երբ օբյեկտիվ իրողությունից ելնելով, հարցվածների կեսը չեն բացառել ՀՀ ինքնիշխանության մակարդակի նվազեցումը՝ անդամակցությունը Միութենական պետությանը: Ավելին, հարցվածների 34%-ը կողմ կամ ավելի շուտ կողմ է արտահայտվել այդ հեռանկարին, և միայն 28%-ն է միանշանակ դեմ ՀՀ ինքնիշխանության սահմանափակմանը:
- Նվազել է ՀՀ քաղաքացիների կողմից ՌԴ նկատմամբ դրական ընկալումը, ինչը նաև 44-օրյա պատերազմից հետո ՀՀ իշխանության որդեգրած քաղաքականության ուղղակի հետևանք է, երբ Հայաստանում և Արցախում սահմանների և անվտանգության հետ կապված բոլոր խնդիրներում փորձ է արվում պատասխանատվությունը դնել ՌԴ կամ ՀԱՊԿ վրա: Այս դինամիկան վստահաբար աննկատ չի մնում Ռուսաստանում և իր երկարաժամկետ ազդեցությունն է ունենալու Հայաստանի վերաբերյալ մեր ռազմավարական դաշնակցի ընկալումների վրա:
- Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ հանրային ընկալումը «համահարթեցվել է», այսինքն՝ ի տարբերություն նախապատերազմյան շրջանի, այժմ ՀՀ քաղաքացիները այդ երկու երկրներին համարում են ՀՀ հանդեպ նույնքան թշնամաբար տրամադրված երկրներ: Հետևաբար, իշխանությունների կողմից Թուրքիայի հետ այժմ տարվող բանակցային գործընթացի և նախկինում տեղի ունեցած «ֆուտբոլային դիվանագիտության» միջև զուգահեռներ անցկացնելու փորձերը անհիմն են:

Թվում է, թե ժողովրդի անունից հանդես եկող կառավարության արտաքին և անվտանգային քաղաքական օրակարգի և հանրային տրամադրությունների իրական պատկերի միջև այսքան մեծ խզումը պետք է հանգեցնե՞ր հանրային լայն զանգվածների տրամաբանական բողոքին և ընդվզմանը, սակայն այստեղ էլ ուշագրավ պատկեր է արտացոլում ՀՌԿԿ հարցման մեկ այլ դրվագ: Խնդիրն այն է, որ ՀՀ քաղաքացիների մի մեծ հատված շատ տարօրինակ պատկերացումներ ունի

պետության և քաղաքացու միջև պատասխանատվության բաշխման հարցի վերաբերյալ: Մասնավորապես, հարցվածների 69%-ը գտնում է, որ «մարդիկ երեխաների նման են, և պետությունը ծնողի նման պետք է հոգ տանի նրանց մասին», և միայն 26%-ն է գտնում, որ «պետությունը վարձու աշխատող է, և մարդիկ պետք է տիրոջ նման վերահսկեն նրան»:



Սա խոսում է այն մասին, որ քաղաքացիների ճնշող մեծամասնության շրջանում գերակշռում է ոչ թե պետության նկատմամբ սեփական պատասխանատվության զգացումը, այլ իր հանդեպ պետության միակողմանի հոգաժողության պահանջը: Նաև սա է պատճառը, որ ստեղծված բարդ աշխարհաքաղաքական և անվտանգային միջավայրում քաղաքացիների մի մեծ հատված բացասաբար է ընկալում Հայաստանի անկախ պետականության վերականգնումը, իսկ ոմանք էլ իրավիճակից ելքը գտնում են ինքնիշխանության շրջանակը ավելի նեղացնելու մեջ: Այսինքն, եթե պետությունը՝ «որպես ծնող» չի կարողանում հոգ տանել իրենց մասին, ապա դա կարող է անել մեկ այլ պետություն կամ վերազգային կազմակերպություն («մեկ այլ ծնող կամ կազմակերպություն»):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: